



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

ք.երևան

«29» 06 2020 թ N 726-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1060-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝


1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2012
թվականի դեկտեմբերի 21-ի «Չափման միջոցների փորձարկումների և տեսակի
հաստատման կարգը սահմանելու մասին» N 1060-Ն հրամանում (այսուհետ՝
Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 2-րդ կետում «Գ. Բաղայանին» բառերը փոխարինել
«Վ. Սիմոնյանին» բառերով:

2) Հրամանի Հավելվածի 11-րդ կետից հանել «(չափման միջոց
արտադրող, ներմուծող)» բառերը:

3) Հրամանի Ձև 1-ից հանել «(արտադրող, ներմուծող)» բառերը:

4) Հրամանի Ձև 3-ում և Ձև 6-ում «Չափագիտության ազգային
ինստիտուտ» բառերը փոխարինել «Ստանդարտացման և չափագիտության ազգային
մարմին» բառերով:


ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1060-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Սույն հրամանում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես, 2019թ. ՀՀ ֆինանսների նախարարությունում, ՀՀ կառավարությունում կայացած հանդիպումների շրջանակներում քննարկվել են մի շարք պետական կազմակերպությունների, այդ թվում նաև «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների գործառույթները, կառուցվածքները, ռեսուրսները, վերջիններիս կողմից իրականացվող գործընթացների, մատուցվող ծառայությունների հիմնավորվածություններն ու դրանց շարունակականության ապահովման նպատակահարմարությունը, ոլորտներում առկա ռիսկերը, ինչի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՀ կառավարության N 1472-Ա որոշումամբ հաստատվել է վերոնշյալ ընկերությունների միաձուլումը և ստեղծվել է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ ստեղծելուց հետո անհրաժեշտություն է առաջացել մի շարք իրավական ակտերում փոփոխություն կատարել և արդիականացնել ազգային մարմնի անվանումը, վերջինիս անխափան աշխատելու նպատակով:

Հարցի առնչությամբ պետք է նաև նշել, որ չափման միջոցի տեսակի հաստատման գործառույթի իրականացման ընթացքում նախկինում «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի աշխատակիցները բազմիցս առընչվել են այնպիսի խնդրի, երբ չափման միջոցը տեսակի հաստատման ներկայացնող հայտատուն չի կարողանում տրամադրել տվյալ չափման միջոցի մաքսային ձևակերպման փաստաթուղթ կամ ձեռք բերման հաշիվ ապրանքագիր, քանի որ տվյալ չափման միջոցը ձեռք է բերել շուկայում կամ արտերկրում ու ներմուծել որպես ուղեբեռ: Նման դեպքերում նշյալ հայտատուները չեն հանդիսանում տեսակի հաստատման ներկայացված չափման միջոցի ոչ արտադրող, և ոչ էլ ներմուծող, ինչը չի համապատասխանում ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N

1060-Ն հրամանի պահանջին: Հաշվի առնելով վերոգրյալ խնդիրը՝ անհրաժեշտություն է առաջացել խմբագրել կարգի 2-րդ մասի 11-րդ կետի բովանդակությունը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք .

Իրավական ակտի նախագծի մշակումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Իրավական ակտում փոփոխություն կատարելու արդյունքում հնարավոր կլինի կազմակերպել Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի անխափան աշխատանքը և բավարարել համապատասխան ոլորտների շահառուների պահանջները: